Խե կոյս ապաշխարող աղջկունք գերի առին և Թաւրիզու մինչև յԱրզրում գեղօրէքն ի փախստի են ի լերինս վասն երթևեկողացն. Արզրում սղութիւն հացի գոյ և հարկապահանջութիւն. բայց առ և տուրն լաւ է, շատ հոգ չեն քարշեր։ (Նիրսես քահանայ Կարապետեան Բաղեշցի առ Մխ. Աբբայ. 1726 Սեպտ. 1. ի Կոստանդինուպոլիս)։

Ի.

Ցայտ լիցի սիրով, զգիր վերապատուելութեանդ ընկալայ, և զի որպէս լուայ ի քէն, թէ հարուած ժանտամահութեան գոյ ի Կոստանդնուպոլիս և յայլս տեղիս ներ տէրութեան տաճկաց, նոյնպէս և աստ լաք, թէ շարժ մեծ եղեալ է ի Փալերմա, և աւելի քան զՌ անձինս մեռեալք են կործանմամբ շինուածոցն։ Նաև գոյ կասկած խռովութեան և պատերազմի ներ իշխանացն արևմըտականաց։ (Ցօնան եպս. Սեպաստիոյ առ Մխ. Աբբայ. 1726 Սեպտ. 21, ի Փոնրէսիսրն [Հռովմ])։

ԻԱ.

Վրդանէս եպիսկոպոսն մին փառաւոր յարգութեան և շնորհաւորութեան գիր գրեաց առ Կարապետ կաթողիկոսն, մին ոսկի միտալ որ արժէր 9 ուսկոթ, և զայլս 2 միտալս արծաթեայ. և յանձն առաւ յայս էնկիւրեցիս [Կիրակոս], որ անմիջապէս իբրու դեսպան գնալոց է և յանձամբն մատուցանելոց է զյիշեցեալս առ կաթողիկոսն Հայոց։ Եւս զայս իրս շատ ժաման(ա)կ էր որ յորքան խօսս հանդիպէր, ասէի եպս.ին. ահա պատշաճ ժամու եղև. յուսով բարոյ վաղճանի։ (Պաղտասար քահանայ Աբրահամեան [Տիգրանակերտցի] առ Միխիթար Աբբայ. 1727. մարտ 19, ի Հռոմ. յեկեղեցւոյ Հայոց)։

ԻԲ.

Սուգիաս եպիսկոպոսն ողջունէ զքո հրամանքն, և ունի զայս ի մտի, այսինքն, խնդրել ի քէն զՌ քահանայ կրօնաւորս՝ ինքեան օգնական ի հոգևոր գործողութիւնս, քանզի է խոստովանահայր ի սուրբն Պետրոս հաստատուն վճռիւ, և այն չանացաւ առնել անւամբ կարգի սրբոյն Անդոնի, մի գուցէ ընդ պակասիլ եպիսկոպոսացն հայոց, կորուսցեն հայք զտեղին զայն, զոր աշխատանօք բազմօք հազիւ ընկալան։ Երկրորդ՝ կալաւ զպաշտօն ներհմտացուցանելոյ զմանկունս ի գիր, ի լեզու, և ի ժամակարգութիւնս հայոց ի գօլէջն, շաբաթն Բ անգամ, գնալով անդ զկնի միջօրէին։ Երրորդ՝ կալաւ վերջապէս զհոգաբարձութիւն Ս. Մարիամ Եգիպտացւոյն, ունի և զպաշտօն խոստովանահայրութեան ի նմա, և դիտաւորութիւն մերն է՝ ձգել զփրկաւէտ պաշտօնքս զայսոսիկ ի ձեռն կրօնաւորաց համեստաբարոյից և զփառս Աստուծոյ խնդրողաց, ևս առաւել անմահ գոլով կրօնն, ոչ տեղն կորուսանի, և ոչ պաշտօնեայն հաւատարիմ պակասիցի։ Աստ՝ տեղ և պաշտօն ունիլն է ձեզ ևս յոյժ օգտակար, զի թշնամիքն խորշելով՝ ոչ համարձակին այնքան արձակօրէն չարախօսել, և այլն։ (Ցօնան եպս. Սեպաստիոյ առ Մխ. Աբբայ. 1727 Նոյեմբ. 22 [Հռովմ]. ի Ս[անբա]. Մ[արիա] Ե[գիպտացի])։

ԻԳ.

Ի թօխաթ մինչև ցայժ[մ] ոչինչ մարմնական արդիւն եղև. աստ ևս կարծեմ թէ սակաւ լինելոց է, զի զբազումս տուգանս վասն հալածանաց տուեալք են, և զծանր հարկս և զհասկս ի պատճառս շարժեցման զօրացն, և զի յաւուր Ծննդեան Տեառն ևս միայն զԲս[= զերկուս] պատարագս հազիւ կարացեալ առնել, զի տակաւին ի Բոգնիկ էի (զի նախ անդ իջևանեցայ, և զկնի 20 աւուրց ապա գնայի բռնութեամբ քաղաքացւոցն ի քաղաք) վասն զի յայնմ գիշերի 2000 զինուորք իջևա-